ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն
Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը
Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները
Բելառուսի Հանրապետություն, Մինսկ, 2018 թվականի նոյեմբերի 20-22

4. Հրավիրող կողմը
Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարություն, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, ՄԱԿ-ի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միացյալ ծրագիր (UNAIDS), ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի, մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ և «Կանգնեցնել տուբերկուլոզը» գործընկերություն

5. Գործուղման նպատակը
Մասնակցություն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԱ) տարածաշրջանի երկրներում որակյալ և մատչելի դեղամիջոցների և բժշկական պարագաների հասանելիության ընդլայնման հարցերին նվիրված երկրորդ տարածաշրջանային խորհրդաժողովին

6. Քննարկված թեմաները
2018 թվականի նոյեմբերի 20-22-ը Մինսկում կայացած տարածաշրջանային խորհրդակցությունը թվով երկրորդն էր: Առաջինը կայացել էր 2016 թվականին Մինսկում: Վերջինիս ընթացքում ընդունվել էր Մինսկի 2016 թ. հայտարարությունը: Տարածաշրջանային երկրորդ խորհրդակցությանը հրավիրված էին մասնակցելու ԱԵԿԱ տարածաշրջանի երկրների առողջապահության նախարարներ և բարձրաստիճան պաշտոնյաներ, դեղամիջոցների ներմուծման և դեղերի շուկան կարգավորող քաղաքականություն մշակող և իրականացնող մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև միջազգային գործընկեր-կազմակերպությունների, դեղագործական ընկերությունների, գնումների գործակալությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ոլորտի փորձագետներ: ՀՀ առողջապահության նախարարության պատվիրակության մեջ ընդգրկված էին ոլորտը համակարգող փոխնախարարը, դեղերի քաղաքականության և գնումների գործընթացները մշակող և իրականացնող ստորաբաժանումների ներկայացուցիչները:

Խորհրդակցությունը կազմված էր երկու մասից՝ տեխնիկական-խորհրդատվական և բարձր մակարդակի խորհրդակցություն:
Տեխնիկական մասի մասնակիցները քննարկեցին 2016 թվականի Մինսկի հայտարարության իրականացման ընթացքում գրանցված ձեռքբերումները և առաջացած խնդիրները, ինչպես նաև հետագա գործողությունները: Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԱ) տարածաշրջանում դեռևս նկատվում են ՄԻԱՎ վարակի և բազմակայուն տուբերկուլոզի մակարդակի աճի բարձր ցուցանիշներ: Վերջին տասնամյակում ԱԵԿԱ երկրներում զգալի ջանքեր են ներդրվել ՄԻԱՎ, տուբերկուլոզ, հեպատիտ Ց ունեցող մարդկանց հայտնաբերման և բուժման գործում, սակայն դա չի նպաստել տարածաշրջանում շոշափելի ընգրկվածության ձեռքբերման և ԱԵԿԱ տարածաշրջանը դեռևս հանդիսանում է աշխարհում ամենացածր ընդգրկվածություն ունեցողներից մեկը: Այս ցուցանիշի հիմնական պատճառներից մեկը հակառետրովիրուսային, հակատուբերկուլոզային, հեպատիտ Ց-ի դեմ դեղամիջոցների դեռևս բարձր արժեքն է: Միաժամանակ բուժում ստացող մարդկանց քանակը ամենացածրն է: ԱԵԿԱ տարածաշրջանը համարվում է դեղակայուն տուբերկուլոզի նկատմամբ ամենախոցելին: Այս ամենը երկրների տնտեսության վրա ունի զգալի բացասական հետևանք և ստեղծում է դժվարություններ՝ հիվանդների ախտորոշման և բուժման գործընթացում:
Հաշվի առնելով վիրուսային հեպատիտ, տուբերկուլոզ և ՄԻԱՎ հիվանդությունների և դրանց ուղեկցող այլ վարակների մեծ բեռը, նշվել է, որ անհրաժեշտ է ԱԵԿԱ տարածաշրջանում ապահովել վաղ ախտորոշում և որակյալ ու մատչելի դեղամիջոցների հասանելիություն՝ ընդգրկվածությունը մեծացնելու և վարակների հետագա տարածումը կանխելու նպատակով:
Բարձր մակարդակի խորհրդակցությանը ներկա էին ԱԵԿԱ տարածաշրջանի երկրների առողջապահության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք ձեռք բերեցին քաղաքական համաձայնություն՝ հաստատելով 2016 թ. Մինսկի առաջին հայտարարության սկզբունքները: Քննարկեցին 2016 թ. Մինսկի առաջին հայտարարությունից հետո ծագած խնդիրները և դրանց լուծման եղանակները, կիսվեցին տուբերկուլոզի, ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտների ախտորոշման և բուժման ոլորտներում իրենց ձեռքբերումներով: Քննարկումների գերակշիռ մասը առնչվում էր վերը նշված հիվանդությունների բուժման համար նախատեսված դեղերի և ախտորոշիչ նյութերի շուկայի միտումներին, ինչպես նաև այդ ոլորտի կարգավորմանն ուղղված միջոցառուների փոխհամաձայնեցմանը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման ընթացքում բելառուսական կողմը կազմակերպել էր հանդիպում Բելառուսի առողջապահության նախարարությունում՝ առողջապահության նախարար Վ.Մալաշկոյի և փոխնախարարների հետ: Կազմակերպվել էր նաև այց բելառուսական դեղարտադրող հոլդինգ:

Խորհրդաժողովի շրջանակներում հանդիպել եմ Գլոբալ հիմնադրամի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի ՄԻԱՎ-ի դեմ պայքարի միացյալ ծրագրի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ժամանակ նշվեց միջազգային գործընկերների խորհրդատվական և տեխնիկական օժանդակության զգալի դերը՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և հեպատիտ Ց-ի դեմ պայքարի գործում, ինչպես նաև ուրվագծվեցին հետագա անելիքները:
Խորհրդաժողովին ելույթ եմ ունեցել՝ ներկայացնելով վերը նշված հիվանդությունների դեմ պայքարի գործում Հայաստանի անցած ճանապարհը, ձեռքբերումները, առկա խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ արվող աշխատանքը և կարևորելով միջազգային կազմակերպությունների անգնահատելի դերը այդ գործում, ինչպես նաև միջոլորտային և միջգերատեսչական համագործակցությունը:
Հայաստանը տուբերկուլոզի, ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտների դեմ պայքարի գործում ունի զգալի ձեռքբերումներ, որոնց հասել է միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցության արդյունքում: Այս գործում Հայաստանին մեծ օժանդակություն են ցուցաբերել ՄԱԿ-ի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միացյալ ծրագիրը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի, մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամը և այլն: Սակայն, ինչպես ամբողջ տարածաշրջանում, այնպես էլ Հայաստանում, այդ հիվանդությունների դեմ պայքարի գործընթացում կան բազմաթիվ մարտահրավերներ և խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է համատեղ որոշումների ընդունում և գործողություններ:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի երրորդ օրը՝ նոյեմբերի 22-ին, երկրները ստորագրեցին 2018 թվականի Մինսկի հայտարարությունը, որով ամրագրվեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի, հեպատիտ Ց-ի դեմ պայքարի հետագա փոխհամաձայնեցված քայլեր անելու կողմերի պատրաստակամությունը:

9. Առաջարկությունները

Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարի հետ հանդիպման ընթացքում քննարկվեց առողջապահության բնագավառում հայ-բելառուսական հարաբերությունների ներկայիս ընթացքը և առաջարկվեց 2005 թվականին ստորագրված միջգերատեսչական համաձայնագրով նախատեսված համագործակցությունը ակտիվացնելու նպատակով մշակել երկու երկրների

առողջապահության նախարարությունների միջև գործողությունների ծրագիր, որի շրջանակներում կողմերը կհամագործակցեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող և ներկայիս առողջապահական մարտահրավերներին համահունչ ուղղություններով, մասնավորապես՝ դեղարտադրություն, պլաստիկ վիրաբուժություն, օրգանների փոխպատվաստում, ստոմատոլոգիա, բժշկական տուրիզմ և այլն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

26.11.2018

X

VERIFIED OCSP 26.11.2018 16:26:32 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

26.11. 2018 թ.